ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Թամարա Բաղդասարյանի, Պավել Գյուլումյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Մարինե Ֆարմանյանի, Դավիթ Մելքոնյանի և Դավիթ Վարդիկյանի,

քննության առնելով Պալատի 2025 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված անկախ աուդիտորական եզրակացությունը հաստատելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 29.12.2025թ. թիվ 31/14-Լ որոշմամբ Պալատի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնելու համար որպես անկախ աուդիտ ընտրվել էր «Գլոբ Աուդիտ» ՍՊ ընկերությունը, որը կատարված ուսումնասիրությունների արդյունքում 19.03.2026թ. ներկայացրել է անկախ աուդիտորական եզրակացություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 կետի 4-րդ ենթակետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Պալատի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնող «Գլոբ Աուդիտ» ՍՊ ընկերության 19.03.2026թ. անկախ աուդիտորական եզրակացությունը:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

31 մարտի 2026թ.
թիվ 7/9-Լ
ք. Երևան